ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.10.2014թ.
223-ի 9

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Երեւան քաղաքի Ծարավ Աղբյուր փողոցում (Ավան վարչական շրջան) նորակառույց շենքերին հասնող երկու երթուղային գիծ է աշխատում (միկրոավտոբուս): Ընդ որում, երկու երթուղիներն էլ երկար են, մոտ 1 ժամ է տեւում տվյալ երթուղիներով քաղաքի այլ հատված հասնելը: Միաժամանակ, Ծարավ Աղբյուր փողոցի նորակառույց շենքերում բազմաթիվ ընտանիքներ են բնակվել ոչ վաղ անցյալում, եւ երկու երթուղիները չեն կարողանում պատշաճ սպասարկել այդ քանակի բնակիչներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Նախատեսվու՞մ է արդյոք վերակազմակերպել Ծարավ Աղբյուր փողոց հասնող երթուղիները (ավելացնել երթուղիների քանակը եւ/կամ ապահովել ոչ միայն միկրոավտոբուսներով, այլ նաեւ ավտոբուսային երթուղիով, նախատեսել այնպիսի երթուղիներ, որոնք կապահովեն քաղաքի այլ հատվածների հասանելիությունն ավելի կարճ ժամանակում եւ այլն),
2. Եթե այո, ապա ե՞րբ եւ ինչպիսի՞ փոփոխություններ են նախատեսվում,
3. Եթե ոչ, ապա խնդրում ենք սույն գրությունն ընդունել որպես դիմում եւ անդրադառնալ բարձրացված խնդրին:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան